# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին»

Պաշտոնապես

հաստատված

տեքստ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին»**

«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) մասնակից պետությունները, այսուհետ՝ Կողմեր,

ընդունելով անդրազգային հանցավորության դեմ պայքարի հետ կապված խնդիրների լուծման ժամանակ տեղեկատվական փոխգործակցության ամրապնդման անհրաժեշտությունը,

**պայմանավորվեցին հետեւյալի մասին.**

### Հոդված 1

Պայմանագրում կատարել հետեւյալ փոփոխությունները՝

1. 1-ին հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ը» կետով՝

«ը) **փաստաթղթի էլեկտրոնային պատճեն (պատկեր)՝** թղթային կրիչով փաստաթղթի՝ սկանավորման (լուսանկարման) միջոցներով էլեկտրոնային տարբերակի վերածված պատճեն»:

2. 5-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«բ) փաստաթղթի էլեկտրոնային պատճենի (պատկերի) տեսքով՝ գերատեսչական էլեկտրոնային փոստի ծառայությունների միջոցով՝ հետագայում ուղարկելով բնօրինակը (անհրաժեշտության դեպքում),»:

## Հոդված 2

Սույն արձանագրությունը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո եւ ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Սույն արձանագրությունն ստորագրելիս Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի հայտարարելու, որ ժամանակավորապես չի կիրառի սույն արձանագրությունը կամ այն ժամանակավորապես կկիրառի սույն արձանագրությամբ նախատեսված ամսաթվից տարբերվող այլ ամսաթվից:

## Հոդված 3

Ուժի մեջ մտնելուց հետո սույն արձանագրությունը բաց է Պայմանագրի ցանկացած մասնակից պետության կողմից դրան միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Կատարված է Մոսկվա քաղաքում՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն արձանագրությունը ստորագրած պետություններից յուրաքանչյուրին կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն] (վերապահումով)*

**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն] (վերապահումով)*

**Տաջիկստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Բելառուսի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Թուրքմենստանի կողմից՝**

**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ուզբեկստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**

*[ստորագրություն]*

**Ուկրաինայի կողմից՝**

**Մոլդովայի Հանրապետության կողմից՝**

**ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ**

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության վերաբերյալ**

Արձանագրության 2-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան՝ Ադրբեջանի Հանրապետությունը ժամանակավորապես չի կիրառի սույն արձանագրությունը դրա ստորագրման օրվանից 20 օրը լրանալուց հետո:

**Ադրբեջանի Հանրապետության**
**նախագահ՝** *[ստորագրություն]* **Ի. Ալիեւ**

*(վերապահումով)*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ**

**«Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության համար սույն արձանագրությունն ուժի մեջ կմտնի եւ կկիրարկվի Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան, որով միջազգային պայմանագրերի ժամանակավոր կիրառում չի նախատեսվում:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ՝** *[ստորագրություն]* **Նիկոլ Փաշինյան**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2024 թվականի հոկտեմբերի 8-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ անձանց միջպետական հետախուզման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 10-ի պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**